ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 499-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 499-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափը սահմանելու մասին» N 499-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «23» թիվը փոխարինել «24» թվով:
2. Որոշման հավելվածի՝

- 2-րդ և 3-րդ կետերից հանել «ու կոմպետենցիաների» բառերը.
- 5-րդ կետը «մասնագիտական գիտելիքների» բառերից հետո լրացնել «և դրանք կիրառելու կարողությունների» բառերով.
- 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրական ակտերից (այսուհետ՝

ընդհանուր օրենսդրական ակտեր) մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքները կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրությունից (այսուհետ՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտեր) մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքները՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան մարմինները (այսուհետ՝ համապատասխան մարմին), բացառությամբ գլխավոր քարտուղարի մրցույթի։».

- 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.Գլխավոր քարտուղարի մրցույթի դեպքում ընդհանուր օրենսդրական ակտերերից և համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերից մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքները կազմում և տեղեկատվական հարթակում տեղադրում է է քաղաքացիական ծառայության գրասենյակը։ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի թեստում համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերից թեստային առաջադրանքները կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է համապատասխանաբար՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հաշվեքննիչ պալատը։».

- 8-րդ կետի «մասնագիտական գիտելիքների» բառերը փոխարինել «համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերի» բառերով.
- 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերի վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի կամ օրենքով նախատեսված պաշտոնատար անձի կողմից հաստատված մասնագիտական գիտելիքների շրջանակից՝ հիմք ընդունելով տվյալ մարմնի գործունեության հիմնական ոլորտները և տվյալ պաշտոնի առանձնահատկությունները։».

- 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.
- 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13.Արտաքին մրցույթի դեպքում համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերի վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են տվյալ ոլորտը և քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների իրականացումը կանոնակարգող սահմանադրական օրենքներից, օրենքներից, օրենսգրքերից և տվյալ պաշտոնի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերից։ Ընդ որում, հայտարարության մեջ համապատասխան մարմնի կողմից թեստային առաջադրանքներ կազմելու

համար հրապարակվող բնագավառների թիվը չի կարող չորսից ավելի լինել։».

- 14-րդ և 15-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.
- 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.Հայտարարության մեջ թեստավորման փուլի անցկացման համար հրապարակվող բնագավառներում նշվում են սահմանադրական օրենքների, օրենքների, օրենսգրքերի համապատասխան գլուխները և հոդվածները, ինչպես նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխան կետերը։».

- 17-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
- 25-րդ, 32-րդ, 34-րդ և 36-րդ կետերի «մասնագիտական գիտելիքների» բառերից հետո լրացնել «, դրանք կիրառելու կարողությունների» բառերով.
- 27-րդ կետի «և» շաղկապը փոխարինել «կամ մեկից» բառերով.
- 30-րդ կետի «պատասխանի բացակայությունն է, 1-ը ցածր մակարդակն է, 2-ը՝ միջին և 3-ը՝ բարձր» բառերը փոխարինել «պատասխանի բացակայությունն է կամ անբավարար պատասխանը, 1-ը բավարար պատասխանն է, 2-ը՝ լավ, իսկ 3-ը՝ գերազանց» բառերով.
- 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. Սույն հավելվածի 28-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ձևաչափով նախօրոք կազմված հարցերի միջոցով անցկացվում է հարցազրույց։ Հարցարանը կազմված է չորս հիմնական բաժիններից։ Հարցարանի առաջին բաժնի հարցերի միջոցով ստուգվում են ընդհանուր օրենսդրական ակտերից մասնակցի մասնագիտական գիտելիքները և դրանք կիրառելու կարողությունները, երկրորդ բաժնի հարցերի միջոցով ստուգվում են համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերից մասնակցի մասնագիտական գիտելիքները և դրանք կիրառելու կարողությունները, երրորդ բաժնի հարցերի միջոցով ստուգվում են մասնակցի ընդհանրական և ընտրանքային կոմպետենցիաները, իսկ չորրորդ բաժնի հարցերի միջոցով՝ անձնային որակները։ Պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների առանձնահատկությունից բխող որևէ կոնկրետ կարողություն ստուգելու անհրաժեշտության դեպքում հարցարանը կարող է ներառել նաև լրացուցիչ՝ հինգերորդ բաժին։ Հինգերորդ բաժնում ներառված հարցերի բովանդակությունը պետք է բխի տվյալ կոնկրետ կարողությունը ստուգելու անհրաժեշտությունից։».

- 35-րդ կետի «մասնագիտական գիտելիքները» բառերից հետո լրացնել «, դրանք կիրառելու կարողությունները» բառերով.
- 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«38.Էսսե ձևաչափով հարցազրույց անցկացնելու որոշում կայացվելու դեպքում մրցույթի հայտարարության մեջ նշվում է այն ոլորտը, որի շրջանակում առաջադրվելու է էսսեի թեման։ Էսսեի թեման ընտրում է մասնակիցը՝ հանձնաժողովի կողմից առաջարկված առնվազն երեք տարբերակներից։».

- 43-րդ կետի «մասնագիտական գիտելիքները» բառերից հետո լրացնել «, դրանք կիրառելու կարողությունները» բառերով.

- ՁԵՎ N 1-ի՝

ա. վերնագրից հանել «ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ» բառերը.

բ. առաջին տողի 3-րդ սյունակի «Մասնագիտական գիտելիքներին» բառերը փոխարինել «Համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրության բնագավառին» բառերով.

գ. առաջին տողի 4-րդ սյունակի «Կոմպետենցիաներին» բառը փոխարինել «Ընդհանուր օրենսդրության բնագավառին» բառերով.

- ՁԵՎ N 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՁԵՎ N 3

ՀԱՐՑԱՐԱՆ

ՀՀ _____ (համապատասխան մարմին)-ի _____(ստորաբաժանում)-ի _____(պաշտոն)-ի (ծածկագիր___) թափուր պաշտոնի համալրման համար անցկացվող հարցազրույցի փուլի

Առաջին բաժին

Բաժնի անվանումը	Հարցեր (օրինակ)
	(Ղեկավար խմբի պաշտոնների համար)
Ընդհանուր օրենսդրական ակտերից մասնագիտական գիտելիքների և դրանք կիրառելու կարողությունների ստուգում	1. Ինչպե՞ս է իրականացվում պետական իշխանությունը Հանրապետությունում, ո՞ր սկզբունքն է դրված պետական իրականացման հիմքում։ 2. Որո՞նք են հանրային ծառայության հիմնական սկզբուն Ինչպե՞ս կմեկնաբանեք «հանրային ծառայողի պաշտպանվ մասնագիտական գործունեությանը չհամապատասխանող միջամտությունից» սկզբունքի բովանդակությունը։ 3. Ի՞նչ նպատակ է հետապնդում հանրային ծառայողների հանձնաժողովի և բարեվարքության հարցերով կազմակեր ինստիտուտի ձևավորումը։ 4. Որո՞նք են քաղաքացիական ծառայության պաշտոն զբ դեպքերը։ Ներկայացրեք փոխադրման կարգով քաղաքացի ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերն ու առանձնահատկությունները։ 5. Ներկայացրեք պետական ծառայողին տրվող դրամ օգնության դեպքերը և ընթացակարգը։ 6. Այլ հարցեր՝ առաջադրված հանձնաժողովի կողմից։

Առաջին բաժնի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշը	Միավորը	Ցուցիչը
Գերազանց	3	Գերազանց պատկերացնում է պետական ծառայության և քաղաքացիական ծառա առաջնահերթությունները:
Լավ	2	Պատկերացնում է պետական համակար ծառայության և քաղաքացիական ծառա առաջնահերթությունները:
Բավարար	1	Հստակ չի պատկերացնում քաղաքացիս պետական կառավարման խնդիրներն ո առաջնահերթությունները: Գիտելիքները
Անբավարար	0	Պատասխանը բացակայում է, կամ տրվ

Երկրորդ բաժին

Բաժնի անվանումը	Հարցեր (օրինակ)
Համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրական ակտերից մասնագիտական գիտելիքների և դրանք կիրառելու կարողությունների ստուգում	(Գլխավոր քարտուղարի պաշտոնի համար) 1. Թվարկեք գլխավոր քարտուղարի լիազորությունները 2. Պարզաբանեք հետևյալ կարգավորման իմաստը՝ «Գլ քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանը իր մեղքով վնասի համար»։ 3. Ո՞ր կառուցվածքային ստորաբաժանումներն են անմի հաշվետու գլխավոր քարտուղարին: Ինչպիսի՞ մասնագիտ գիտելիքներ են անհրաժեշտ գլխավոր քարտուղարին մար ռեսուրսների կառավարումն արդյունավետ իրականացնել 4. Այլ հարցեր՝ առաջադրված հանձնաժողովի կողմից։

Երկրորդ բաժնի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշը	Միավորը	Ցուցիչը
Գերազանց	3	Գերազանց տիրապետում է աշխատան ոլորտին, ունի մասնագիտական պատ մակարդակ։
Լավ	2	Պատկերացնում է աշխատանքային գ մասնագիտական պատրաստվածությ
Բավարար	1	Աշխատանքային գործունեության ոլոր մակերեսային են, ունի մասնագիտակ ցածր մակարդակ։
Անբավարար	0	Պատասխանը բացակայում է, կամ տրվ

Երրորդ բաժին

Բաժնի անվանումը	Հարցեր (օրինակ)
	(Ղեկավար, իսկ 6-15-րդ հարցերի դեպքում՝ նաև մասնագիտ պաշտոնների համար)
Ընդհանրական և ընտրանքային կոմպետենցիաների ստուգում	1. Ի՞նչ չափանիշներ եք կարևորում լավ ղեկավարի իմիջի համար:
	2. Ո՞րն է ղեկավարի և առաջնորդի տարբերությունը: Ներկ քանի տարբերություններ և մեկնաբանեք:
	3. Ինչպե՞ս կվարվեք այն իրավիճակում, երբ աշխատողը ց կատարողականի ցածր արդյունք, սակայն որպես ղեկավա եք, որ նա կարողունակ է: Ձեր գործողությունները:
	4. Ինչպե՞ս եք պատրաստ հաղթահարել որոշումների կայ գործընթացում առկա կանխակալ վերաբերմունքը: Ինչպե՞ս որոշումների կայացման թափանցիկությունը:
	5. Եթե ստիպված լինեք աշխատանքից ազատելու որևէ ա ապա այդ որոշման կայացման համար ինչպիսի՞ գործոնների կառնեք:
	6. Ղեկավար- աշխատող կամ աշխատող- աշխատող փոխհարաբերություններում կոնֆլիկտային իրավիճակներ կձեռնարկեք: Համաձա՞յն եք այն մտքի հետ, որ եթե ղեկա միջամտում է և կառավարում է կոնֆլիկտը դրա զարգացմա փուլում, ապա հիմնականում կոնֆլիկտը լուծվում է:
	7. Պատկերացրեք իրավիճակ, երբ Ձեր ստորաբաժանման հանձնարարվել է կարճ ժամկետում պետության գերակա ոլ իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ուսումն հնարավոր ռիսկերը, ակնկալվող արդյունքը և ներկայացնել եզրակացություն: Ինչպե՞ս կհաղթահարեք խնդիրները, ինչ կմոտիվացնեք աշխատողներին/գործընկերներին արդյունա աշխատելու համար:
	8. Ինչպե՞ս կապահովեք բաց և թափանցիկ հաղորդակցու հաշվի առնելով աշխատողների/գործընկերների անհատակ կարիքները և հնարավորությունները:
	9. Ինչպե՞ս եք կառավարում սեփական հույզերը լարված իրավիճակներում:
	10. Ինչպե՞ս եք ստեղծում վստահության մթնոլորտ:
	11. Պատմեք՝ ինչպե՞ս կխրախուսեք նոր գաղափարները և նախաձեռնությունները:

12. Ինչպե՞ս եք աջակցում ոչ ստանդարտ մտածողությանը։

13. Ինչպե՞ս կդիմակայեք խմբային մտածողությանը, եթե կ
Ձեր կամ մեկ այլ աշխատողի տեսակետը ավելի փաստահեն
արժեքային։

14. Ինչպե՞ս կվարվեք, եթե Ձեր գործընկերը կամ Ձեր ղեկա
ստորաբաժանման աշխատողը զգուշանում է մտքերը բարձ
արտահայտել։

15. Այլ հարցեր՝ առաջադրված հանձնաժողովի կողմից։

Երրորդ բաժնի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշը	Միավորը	Ցուցիչը
Գերազանց	3	Ցուցաբերում է կոմպետենցիաների բա կայացնելիս ցուցաբերում է վճռականո տարանջատելու և լուծման հերթական կարողություն։
Լավ	2	Ցուցաբերում է կոմպետենցիաների մի ինքնուրույն որոշումներ կայացնել և խ
Բավարար	1	Ցուցաբերում է կոմպետենցիաների ցա իրավիճակներում ունակ չէ ինքնուրույն և խնդիրներ լուծելու։
Անբավարար	0	Կոմպետենցիաները բացակայում են։

Չորրորդ բաժին

Բաժնի անվանումը — Հարցեր (օրինակ)

Անձնային որակներ

(Ղեկավար և մասնագիտական խմբի պաշտոնների համար)
1. Անձնային ո՞ր որակներն են օգնում Ձեզ հաջողության հ
աշխատանքում, որ անձնային որակներն են խանգարում։

2. Մասնագիտական գործունեության ընթացքում եղե՞լ են
դեմ եք գնացել Ձեր սկզբունքներին։

3. Որքանո՞վ եք վստահում մարդկանց, եթե ունեք կասկածն
կբարձրաձայնե՞ք, թե կնախընտրեք լռել և սպասել հարմար

4. Աշխատանքնային գործունեության մեջ որո՞նք են եղել Ձ
հիասթափությունները, ներկայացրեք։

5. Եթե տեսնեք, որ Ձեր աշխատակիցներից (գործընկերներ
խտրական վերաբերմունք ունի որևէ աշխատակցի նկատմա
կվարվեք։

6. Ինչպե՞ս եք ապահովում հավասար և արդարացի վերաբ
աշխատակիցների նկատմամբ՝ անկախ նրանց անձնական
հատկանիշներից:

7. Խնդրում եմ պատմել մի իրավիճակի/դեպքի մասին, երբ
աշխատակիցը աշխատավայրում բախվել եք/է անարդար վե
կամ խտրականության: Ինչպե՞ս եք դիմակայել այդ մարտահ
ինչպե՞ս եք արձագանքել և պահպանել հավասարության և
սկզբունքներին հավատարմությունը:

8. Այլ հարցեր՝ առաջադրված հանձնաժողովի կողմից:

Չորրորդ բաժնի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշները	Միավորը	Ցուցիչը
Գերազանց	3	Ցուցաբերում է անձնային որակների բարձր մակարդ ներկայացնում է իր բնավորության դրական և բաց կողմերը, շփումներում շատ բարեկիրթ է: Ունի խտրա իրավիճակներում միջամտելու, աշխատանքային մի արժեքները պաշտպանելու համարձակություն: Ցուց անկողմնակալություն, արդարություն, ազնվություն ճշմարտացիություն:
Լավ	2	Ցուցաբերում է անձնային որակների միջին մակարդ Կարողանում է գնահատել իր բնավորության դրակա բացասական կողմերը: Հաղորդակցվելիս հասնում է փոխըմբռնման, շփումներում ձգտում է պահպանել բարեկրթության նորմերը, դրսևորում է արդարամտ
Բավարար	1	Ցուցաբերում է անձնային որակների ցածր մակարդ Հաղորդակցվելիս չի ձգտում լսել զրուցակցին: Ունի խ իրավիճակներում չմիջամտելու, աշխատանքային մի արժեքները չպաշտպանելու հակումներ: Ունի կողմն վերաբերմունք:
Անբավարար	0	Անձնային որակները բացասական են: Հաղորդակցվ չի լսում զրուցակցին, չի պահպանում բարեկրթությա Բացասաբար է տրամադրված:

Հինգերորդ (լրացուցիչ) բաժին

Բաժնի անվանումը	Հարցեր (օրինակ)
	(Ղեկավար և մասնագիտական խմբի պաշտոնների համար
Տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում	1. Ի՞նչ եք հասկանում էլեկտրոնային կառավարում ասելո
	2. Ինչպե՞ս եք գնահատում տեղեկատվական տեխնոլոգիա տիրապետման Ձեր մակարդակը:

3. Ո՞րն է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը թափա
ապահովման գործում:

4. Անձնակազմի կառավարման արդյունավետությունը բա
համար ծրագրատեխնիկական ի՞նչ նոր լուծումներ կառաջ

5. Այլ հարցեր՝ առաջադրված հանձնաժողովի կողմից:

Հինգերորդ (լրացուցիչ) բաժնի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշները	Միավորը	Ցուցիչը
Գերազանց	3	Ցուցաբերում է կոնկրետ կարողության տիրապետ մակարդակ: Գերազանց տիրապետում է անհրաժ հմտություններին:
Լավ	2	Ցուցաբերում է կոնկրետ կարողության տիրապետ մակարդակ:
Բավարար	1	Ցուցաբերում է կոնկրետ կարողության տիրապետ մակարդակ:
Անբավարար	0	Կարողությունը բացակայում է:

».

- ՁԵՎ N 4-ի «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»՝

ա. աղյուսակի գնահատման չափանիշները սյունակի «Բարձր մակարդակ» բառերը փոխարինել «Գերազանց» բառով, «Միջին մակարդակ» բառերը՝ «Լավ» բառով, իսկ «Ցածր մակարդակ» բառերը «Բավարար» բառով:

բ.աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«

Անբավարար	0	Պատասխանը բացակայում է, կամ տրված պատ սխալ է:

».

- ՁԵՎ N 5-ի «ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»՝

ա. աղյուսակի գնահատման չափանիշները սյունակի «Բարձր մակարդակ» բառերը փոխարինել «Գերազանց» բառով, «Միջին մակարդակ» բառերը՝ «Լավ» բառով, իսկ «Ցածր մակարդակ» բառերը «Բավարար» բառով:

բ.աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«

Անբավարար	0	Պատասխանը բացակայում է, կամ տրված պատ սխալ է։

».

- ՁԵՎ N 6-ի «ԷՍՍԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»՝

ա. աղյուսակի գնահատման չափանիշները սյունակի «Բարձր մակարդակ» բառերը փոխարինել «Գերազանց» բառով, «Միջին մակարդակ» բառերը՝ «Լավ» բառով, իսկ «Ցածր մակարդակ» բառերը «Բավարար» բառով։

բ.աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«

Անբավարար	0	Պատասխանը բացակայում է, կամ տրված պատ սխալ է։

»։

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 23-ից։

Հայաստանի Հանրապետության

Փոխվարչապետ Տ. Խաչատրյան

---------- 2025 թվական

Երևան